600.0028.16.04.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2002 թվականի №28
ք.Երևան

«Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտահանման № 0044 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 30-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) կետը, 23-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի հունիսի 7-ի №11 որոշմամբ հաստատված կարգը, ինչպես նաև «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության, «Էլեկտրոսվետ» բաժնետիրական ընկերության և «Սամցխե-Ջավախեթիի էներգաընկերության» միջև կնքված էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

«Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերության Վրաստանի Հանրապետության Ախալքալակի շրջան էլեկտրական էներգիայի արտահանման №0044 լիցենզիայի՝ ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 6-ի №27 որոշման 2-րդ կետով սահմանված գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2002 թվականի մայիսի 22-ը:

ՀՀ էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***